ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՌՃ 2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» մարտ 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Արկադի Պետրոսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետև՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 268-Ա/2 հրամանը՝ «1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի «11016. ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարների կազմակերպում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 107957640 (Մեկ հարյուր յոթ միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ, պայմանագրով և կից հավելված 1-ով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետև՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում:

1. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել պայմանագրի 5.2-րդ

կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի Կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Կազմակերպության կողմից պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. Կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. պայմանագրի 2.4.7-րդ և 2.4.8-րդ կետերում նշված ժամկետներում Կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել Կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և Կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Կազմակերպությանը, այդ թվում՝ Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. Կազմակերպությունից ընդունել պայմանագրի պահանջներին համապատասխան Կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման Կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն պայմանագրի 1.1 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը Պետական մարմին ներկայացնել նախորդ եռամսյակի ընթացքում իրականացված Միջոցառումների վերաբերյալ ոչ ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 2-ի,

2.4.8. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ Կազմակերպության կատարողական հաշվետվությունները, ընդ որում՝ Կազմակերպությունը պատասխա-նատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.9. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.10. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.11. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.12. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.13. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորվածավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.14. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը Կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ պայմանագրի 2.4-րդ կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարը Կազմակերպությանը վճարվում է Կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի մարտի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության

համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030997
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ

Չարենցավան համայնք, գյուղ Արզական

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001900
ՀՎՀՀ 00088433

Տնօրեն՝

_____ Ա. Պետրոսյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1
«10» մարտ 2023 թ. կնքված
N ՌՃ 2023 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման					
Անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնա-ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպում	**Ճամբարը նախատեսված** է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների (աշակերտների) համար: **Ճամբարի նպատակն** է աշակերտների ՆԶՊ առարկայից ստացած գիտելիքների հարստացմանը և գործնական գիտելիքների կիրարկմանը: **Ճամբարը պետք է ունենա՝** Նյութատեխնիկական համապատասխան միջոցներ՝ ռազմամարզական ճամբարի կազմակերպման և իրականացման համար, օրվա կարգացուցակ և Ճամբարային ծրագիր՝ հաստատված տնօրենի կողմից Ճամբարի կառուցվածք՝ հաստատված ճամբարի միջոցառման կազմակերպիչ-կենտրոնական շտաբի պետի կողմից: **Ճամբարի կառուցվածքը՝** Ճամբարն ունի ՀՀ զինված ուժերի վաշտի կառուցվածք: Ճամբարի ղեկավարումն իրականացնում է միջոցառման կազմակերպիչ-կենտրոնական շտաբի պետը: Ճամբարի անձնակազմին ներկայացվող պահանջները՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարարի 19.04.2021 թ. թիվ 564-Ա/2 հրամանով հաստատված կարգի: **Ճամբարի ծրագիրը** Ճամբարի ծրագիրը համարվում է նախանական զինվորական պատրաստություն առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական և կիրառական մասը: Ճամբարի ուսումնական ծրագիրը պարունակում է ուսումնական և գործնական դասաժամեր, որոնք իրացվում են դասերի, տեսադասերի, գործնական պարապմունքների, մրցումների միջոցով: Ճամբարի ուսումնական ծրագրի տևողությունը՝ 69 ժամ (ՀՀ ԿԳՄՍ նախարարարի 19.04.2021 թ. թիվ 564-Ա/2 հրամանով հաստատված կարգին համապատասխան):	Ճամբարի ծրագիրը համարվում է նախանական զինվորական պատրաստություն առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական և կիրառական մաս, որը նպատակաուղղված է՝ 1.«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի յուրացմանը, դասավանդման և ռազմամարզական պատրաստվածության ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, 2.իրավիճակային կողմնորոշմանը, 3.նախաձեռնողականության և գործնական հմտությունների զարգացմանը, արտակարգ իրավիճակներում դիմակայելու, դրսևորվելու և արդյունավետ գործելու ունակությունների զարգացմանը, 4.միջոցառման մասնակիցների ֆիզիկական և	Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների համար ռազմամարզական ճամբարի կազմակերպում: 2023 թվականին ճամբարի մասնակիցների թիվը սահմանվում է մինչև 960 աշակերտ: Ճամբարն իրականացվում է առավելագույնը 8 փուլով: Յուրաքանչյուր փուլին մասնակցում են մինչև 200 սովորող: Ճամբարի յուրաքանչյուր փուլի տևողությունը 10 օր է:	**2023 թվականի** հունիս-սեպտեմբեր	107 957 640

	Ճամբարն ունի արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլաններ: Ճամբարի կացարանները պետք է ունենա տարհանման ուղիները ցույց տվող նշաններ (սլաքներ), որոնց պատասխանատուն ճամբարի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետն է (զինղեկը): **Ճամբարում գործող բուժկետը** պետք է համալրված լինի անհրաժեշտ գույքով և առաջին անհրաժեշտության դեղորայքով: **Ճամբարի նյութատեխնիկական ապահովումը** Ճամբարը պետք է ապահովված լինի համապատասխան նյութատեխնիկական բազայով, մասնավորապես. կեցության և սննդի համար անհրաժեշտ գույքով և շինություններով՝ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան, սպորտհրապարակներով, համապատասխան մարզական գույքով, ճամբարի ուսումնական ծրագրից բխող ուսումնադիդակտիկ նյութերով (առաջին օգնության պարագաներ, ուսումնական ինքնաձիգ, ուսումնական ականներ, ուսումնադիդակտիկ նյութեր և պարագաներ), վրանային ճամբարը՝ վրաններով, քնապարկերով, դաշտային պայմաններում ուսուցանելու, սնվելու, մարզական միջոցառումներ կազմակերպելու համար անհրաժեշտ պայմաններով և գույքով, պնևմատիկ և հրազենային հրացաններից կրակելու հնարավորություններ ունեցող հրաձգարանով, պնևմատիկ և հրազենային հրացաններով, համապատասխան թիրախներով, փամփուշտներով, բժշկական առաջին օգնության պարագաներով և նյութերով, անվտանգության սարքավորումներով, պարագաներով և նյութերով: **Սննդի կազմակերպումը՝** Ճամաբարում երեխաներին տրվող սնունդը կազմակերպվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014 թ. N 32-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին հրամանի հավելվածի (այսուհետև՝ Կանոններ) 2-6-րդ, 9-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-30-րդ կետերի համաձայն: **Խոհարարական արտադրանքի պատրաստումը՝** կազմակերպվում է համաձայն Կանոնների 31-42-րդ կետերի պահանջներին համապատասխան: Սննդի կազմակերպման հսկողությանը ներակայցվող պահանջները սահմանված են Կանոնների 48-67 կետերում: Ճամբարում չի կարող կազմակերպվել ևս լրացուցիչ (բուֆետների միջոցով կազմակերպվող) սննդի մատուցում: **ՀՀ պետական պատվերի** շրջանակներում ծառայություն իրականացնող ճամբարում այլ ծառայությունների իրականացումը բացառվում է:	բարոյահոգեբանական հատկանիշների բարձրացմանը, տոկունության, դժվարին պայմաններում առաջադրանքների կատարման վճռականության ձևավորմանը, 5.«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած գիտելիքների ամրապնդմանը գործնական ճանապարհով, 6.«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հետ միջառարկայական կապի մեջ գտնվող առարկաների թեմաների գործնական կիրառությանը, 7.զինվորականի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, 8.անցանկալի և արատավոր դրսևորումների նվազեցմանը միջանձնային հարաբերություններում, 9.կարգապահության և պարտականությունների կատարման պատասխանատվության գիտակցման բարձրացմանը:			

	Տեխնիկական չափանիշները՝ լինի բարվոք վիճակում, որը հնարավորություն կտա ապահովել երեխաների անվտանգությունը, խաղերի և մարզական միջոցառումների համար նախատեսված առնվազն **2 սպորտիրապարակ** /խաղահրապարակ/, **ճաշարան՝ նախատեսված՝** նվազագույնը 130 **երեխայի համար**, առնվազն 30 **լվացարան** /լվացվելու համար նախատեսված /, **լոգարաններ և սանհանգույցներ՝ նախատեսված՝** նվազագույնը **100 երեխայի համար** /տղաների և աղջիկների համար առանձին-առանձին, համաձայն ՀՀ Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 14-րդ կետի/, **հագուստի մաքրման սենյակ՝ համաձայն՝** ՀՀ Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 15-րդ կետի, հագուստի և կոշիկի **չորապահարան՝** համաձայն ՀՀ կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 16-րդ կետի, ճամբարը պետք է ապահովված լինի շուրջօրյա սառը և տաք ջրամատակարարումով, **լվացքատուն՝** համաձայն ՀՀ Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 17-րդ կետի:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030997
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ

Զարենցավան համայնք, գյուղ Արզական

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001900
ՀՎՀՀ 00088433

Տնօրեն՝

_____Ա. Պետրոսյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
«10» մարտ 2023 թ. կնքված
N ՌՃ 2023 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծախսեր	Քանակ	Օր	Միավորի արժեք /դրամ/	Ընդամենը /դրամ/
Սնունդ /աշակերտ/	960	10	2870	27 552 000
Սնունդ /անձնակազմ/	29	80	2870	6 658 400
Կեցություն /աշակերտ/	960	10	800	7 680 000
Կեցություն /անձնակազմ/	29	80	800	1 856 000
անձնակազմի աշխատավարձ				21 210 000
գույք և ծառայություններ				41 081 240
այլ ծախսեր	960	10	200	1 920 000
				107 957 640

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030997
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ

Չարենցավան համայնք, գյուղ Արզական

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001900
ՀՎՀՀ 00088433

Տնօրեն՝

_____ Ա. Պետրոսյան
/ստորագրություն/ Կ.Տ